ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԻՇԱՐԺԱՆ ՕՐԵՐԻՆ

Հայ ժողովրդի կյանքում փետրվարյան հիշարժան օրերը՝ Արցախյան շարժման 34-ամյակ, Հովհաննես Թումանյանի ծննդյան օր, Գիրք նվիրելու տոն և Մայրենիի օր, բանասիրական ֆակուլտետի «Դպրատուն» գրական խմբակի սաները դարձրել են այսօր կազմակերպված գրական-գեղարվեստական միջոցառման առիթ: Միջոցառումը նախաձեռնել է գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի դասախոս, բ.գ.թ., դոցենտ Զինաիդա Բալայանը՝ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ սովորող 1-ին և 3-րդ կուրսերի ուսանողների մասնակցությամբ: Միջոցառումը մեկնարկել է խոնարհումի և հարգանքի արարողությամբ՝ ի հիշատակ 44-օրյա պատերազմում անմահացած մեր հերոս ուսանողների:

«Հայ ժողովուրդը հեղինակ է քաղաքակրթական բարձր արժեքների: Գրերի գյուտից հետո սկսեց բուռն զարգացում ապրել հայ գրականությունը, թարգմանական արվեստը, պատմագրությունը: Մեր ժողովրդի տարեգրության մեջ փետրվար ամիսը հարուստ է նշանակալի իրադարձություններով, որոնց անդրադառնալով՝ մեկ անգամ ևս արժևորում ենք և սերունդների մեջ ամրապնդում հայոց ազգային արժեքները»,-նշել է Զ. Բալայանը:

Միջոցառման ընթացքում ուսանողները ասմունքել են Հովհաննես Թումանյանի և հայ մյուս մեծերի ստեղծագործություններից, հնչեցրել մեծերի իմաստուն մտքերից, հանդես եկել երաժշտական ու պարային կատարումներով:

«Միանգամից թե՛ Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը, թե՛ Գիրք նվիրելու օրը առիթ հանդիսացան մեկ անգամ ևս հաղորդակցվելու հայ գրականության մեծերի երգերի հմայքին՝ գտնելով, որ ոսկեղենիկ հայերենը, հայրենապահությունը, գրասիրությունը, ազգային սթափ մտածողությունը մեր լինելիության խորհուրդն են»,-նշել է ուսանողուհի Գոհար Հայրապետյանը:

Բ.գ.դ., պրոֆեսոր Սոկրատ Խանյանն իր խոսքում, դիմելով ուսանողներին, հորդորել է օգտագործել ժամանակը՝ գիտելիքներ ամբարելու համար, որովհետև, նրա խոսքով, այսօրվա ուսանողը վաղը դառնալու է ապագա սերունդներին ճշմարիտ ճանապարհով ուղղորդող ջահակիրը:

«Այս սերունդն ավելի հայրենատեր է լինելու: Ես հավատում եմ, որ ունենալու ենք այն հույսի, լույսի և հզոր հայրենիքը, որի մասին Թումանյանն էր գրել»,-ասել է ամբիոնի վարիչ, բ.գ.թ. Նոնա Դավթյանը՝ շնորհակալություն հայտնելով միջոցառման կազմակերպիչներին:

Ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Լուսինե Մարգարյանը ևս շնորհակալություն է հայտնել ուսանողներին և դասախոսներին՝ միջոցառման համար՝ նշելով. «Թումանյանի ասած՝ «Էսպես չի մնա...», թող գա այն գալիքը, որին մենք ենք արժանի, թող գա մեր ժողովրդի համար պայծառ գալիքը»:

Միջոցառման ընթացքում դասախոսները գրքեր են նվիրել ուսանողներին:

«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ
Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ
Հրատարակվում է 1994 թվականից
Խմբագիր՝ Զ. Սառաջյան
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ՝ (047) 94 04 91
Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Իմացի՛ր քո համալսարանի մասին:
Այցելի՛ր asu.am կայք:
www.asu.am

ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

№ 01(238)
հունվար-փետրվար-2022

ԱՐՊՀ ՌԵԿՏՈՐ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՄՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ՇՆՆԴԻ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ ուսանողներ, հարգելի՛ գործընկերներդ

Պատմություն է դառնում մաքառումներով լեցուն, մեր հայրենիքում արժանապատվորեն ապրելու և հայեցի կյանքի շարունակականություն ապահովելու համար պայքարի ևս մեկ տարի: Այո, պայքար բոլոր ուղղություններում, պայքար՝ ավերվածը կառուցելու, կորցրածը վերագտնելու, հաշմվածը վերականգնելու, փշրվածը նորոգելու, ունեցածը զարգացնելու ու կատարելագործելու համար...

Մեր համատեղ պայքարը կրթության ու գիտության բնագավառում, հպարտությամբ կարող ենք արձանագրել, որ անցնող տարում արգասաբեր էր ու արժանապատիվ: Պատերազմի կործանարար հետևանքները հաղթահարելուն զուգահեռ մենք միասին իրականացրեցինք Արցախի պետական համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման անհրաժեշտ բոլոր աշխատանքները, և բուհը հաջողությամբ հավատարմագրվեց ՀՀ Որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից, ինչը աննախադեպ իրադարձություն է ԱրՊՀ պատմության ընթացքում, և այն որակական նոր էջ կբացի Արցախի մայր բուհի կրթագիտական կյանքի զարգացման գործում:

Անցնող տարում շարունակվեցին նաև ԱրՊՀ գլխավոր մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքները և մտան ավարտական փուլ: Նոր տարում համալսարանականների առջև իր դռները կբացի ժամանակակից չափանիշներին համապատասխան պայմաններ ունեցող Մայր բուհի գլխավոր մասնաշենքը, ինչը ևս մեծ իրադարձություն կլինի մեր կյանքում:

Կյանքի բնականոն փուլ վերադառնալուն ուղղված մեր բոլոր աշխատանքները կատարվում են նաև մեր անմահացած հերոսների կատարած սխրանքի հրամայականով:

Նրանք չվարանեցին հանուն հայրենիքի պաշտպանության իրենց կյանքերը դնել զոհասեղանին, մենք ևս իրավունք չունենք շեղվելու մեր երթից, յուրաքանչյուրս մեր ստանձնած առաքելությունից ու պարտականությունից. ուսանողը նոր գիտելիքներ ձեռքբերելով, դասախոսը իր կրթագիտական գործունեությունը լիարժեք իրականացնելով, ու այդպես հայրենիքը կապրի, միասին կապրեցնենք մեր հերոսների արյան գնով փրկված Արցախը:

Հավերժ փառք և պատիվ պատերազմներում հավերժի ճամփորդ դարձած մեր հերոսներին, խոնարհումս նրանց հարազատներին:

Մաղթում եմ, որ նոր տարում այլևս ոչ մի դաս կիսատ չմնա պատերազմի պատճառով, ոչ մի ուսանող կիսատ չթողնի ուսումը՝ զենքը ձեռքին ռազմադաշտ մեկնելու համար: Թող այսուհետ համալսարանականները սխրանքներ արձանագրեն կրթության, գիտության ոլորտում և խաղաղ պայմաններում: Բոլորիդ մաղթում եմ առողջություն, անվտանգ ու բարեկեցիկ կյանք: Խաղաղություն բոլորիդ ընտանիքներին:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

ԱՐՊՀ ՌԵԿՏՈՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՆԱՀԻՏ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ՝ ԱՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐ ՆՇԱՆԱԿՎԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հարգարժա՛ն տիկին Հակոբյան,

Շնորհավորում եմ Ձեզ ԱՀ ԿԳՄՍ նախարարի պաշտոնում նշանակվելու առթիվ: Արցախի Հանրապետության համար պատմաքաղաքական այս բարդ ժամանակաշրջանում մեծ առաքելություն, միաժամանակ նաև ծառայություն է ստանձնել մի բնագավառի պատասխանատվություն, որով կանխորոշվում է մեր ազգային-մշակութային ինքնության պահպանումն ու ամրապնդումը, կիրթ ու գրագետ, մրցունակ սերունդներով վաղվա հուսալի հիմնաքարի երաշխիքը, գիտությամբ, կրթությամբ, մշակույթով ու սպորտով մեր երկրի անունը միշտ բարձր պահելն ու առաջ շարժվելը:

Վստահ եմ, որ հանրակրթության բնագավառում ունեցած Ձեր երկարամյա փորձը, մասնագիտական կարողություններն ու մարդկային որակները ծառայեցնելու եք ի նպաստ բնագավառի զարգացման, առկա խնդիրների համար արդյունավետ լուծման ուղիներ գտնելուն: Իսկ տասնամյակների ընթացքում Ձեր աշխատանքի արդյունքում վաստակած բազմաթիվ սաների, ուսուցչական և ծնողական կոլեկտիվների սերն ու հարգանքը կնպաստեն մեր երկում հանրային համերաշխության ավելացմանը, փոխըմբռնման մթնոլորտում արդյունավետ աշխատանք ծավալելուն:

Մաղթում եմ Ձեզ հաջողություններ, բեղուն գործունեություն՝ ի շահ մեր հայրենիքի զարգացման:

ԱՐՊՀ-Ն ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՑԱՆՑ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ

Փետրվարի 21-ին Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի և Գավառի պետական համալսարանի համատեղ նախաձեռնությամբ կազմակերպվել է Մայրենիի օրվան նվիրված միջազգային առցանց համաժողով՝ «Մայրենիի ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ» խորագրով:

Համաժողովին մասնակցել են գիտնականներ ու մանկավարժներ աշխարհի մեկ տասնյակից ավելի երկրներից: Արցախի պետական համալսարանից համաժողովին մասնակցել են ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը և բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Լուսինե Մարգարյանը: Ողջունելով համաժողովի մասնակիցներին՝ ԱրՊՀ ռեկտորը կարևորել է համաժողովի նշանակությունը և մաղթել արդյունավետ աշխատանք:

Լուսինե Մարգարյանը համաժողովին հանդես է եկել «Արդի լեզվավիճակը և իրականացվող լեզվաքաղաքականությունը Արցախում» թեմայով զեկուցմամբ:

Մասնակիցների խոսքով՝ համաժողովը հնարավորություն է տվել տեղեկանալու տարբեր աշխարհամասերում ու երկրներում առկա լեզվական իրավիճակին, մտքերի փոխանակության և ջանքերը մեկտեղելու, միասնաբար առաջադրելու և լուծելու մայրենի լեզվին վերաբերող խնդիրներ:

ԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ

Փետրվարի 18-ին ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի իրավունքի ամբիոնի դասախոս, ի.գ.թ., դոցենտ Ռիտա Առուստամյանի նախաձեռնությամբ կազմակերպվել են գիտական ընթերցումներ՝ նվիրված 2017 թ. փետրվարի 20-ին ընդունված ԱՀ Սահմանադրության օրվան, որի ընթացքում «Իրավագիտություն» մասնագիտության 2-րդ և 4-րդ կուրսերի ուսանողները հանդես են եկել գիտական զեկուցումներով արդիական նշանակություն ունեցող խնդիրների շուրջ:

Ողջունելով ներկաներին՝ իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.թ. Տաթևիկ Գևորգյանը խոսել է օրվա խորհրդի և Սահմանադրության կարևորության մասին:

«Սահմանադրությունը մեր երկրի, մեր պետականության, իրավականության, մեր ինքնուրույնության հիմնական խորհրդանիշն է հանդիսանում: Սահմանադրությունը նաև յուրաքանչյուր պետության անձնագիրն է: Մենք ունենք այդ անձնագիրը և պետք է անենք ամեն ինչ, որպեսզի մեր իրավունքները, ազատությունները օրենքով սահմանված կարգով պաշտպանվեն ստեղծված ծանր ու բարդ իրավիճակում»,-նշել է Տաթևիկ Գևորգյանը:

«Սահմանադրությունն ապահովում է մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները: Սահմանադրությունն ընդունվում է ժողովրդի կողմից ժողովրդի համար: Այն ամրագրում է ժողովրդի և պետության կապը: Իրավունքը, կորցնելով իր արժեքը, կորցնում է նաև իր ուժը՝ իրավունքի ուժը: Յուրաքանչյուր տարի իրավունքի ամբիոնը տարբեր ձևաչափերով՝ կլոր սեղան-քննարկում, դատախաղ, այցելություններ դպրոցներ և այլն, անդրադառնում է Սահմանադրությանը և նպաստում հասարակության իրավագիտակցության բարձրացմանը»,-նշել է Ռ. Առուստամյանը՝ հավելելով, որ այս տարի ընտրել են գիտական ընթերցումների ձևաչափը:

Միջոցառման ընթացքում Ռ. Առուստամյանի ղեկավարությամբ զեկուցումներով հանդես են եկել ուսանողներ Սնեժանա Թամրազյանը՝ «Քննիչ հանձնաժողովը ԱՀ և ՀՀ Սահմանադրություններում», Արա Սարգսյանը՝ «Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը», Աստղիկ Բաբայանը՝ «Տեղական ինքնակառավարումը հետպատերազմյա Արցախում», Վլադիմիր Մարտիրոսյանը՝ «Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումները ռազմական դրության ժամանակ», Մարգարիտա Ստեփանյանը՝ «Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանափակմանը ներկայացնող պահանջները ԱՀ Սահմանադրության մեջ» (ղեկավար՝ Արմինե Դանիելյան) թեմաներով:

«ԱՀ ՄԻՊ ինստիտուտը ամբողջությամբ իրեն բացահայտել է պատերազմի ընթացքում և հետպատերազմյան շրջանում: Նրա դերը էլ ավելի է բարձրացվել և մինչ օրս էլ ԱՀ ՄԻՊ-ը անդրադառնում է Ադրբեջանի կողմից իրականացվող բոլոր խախտումներին և նպաստում դրանց նկատմամբ միջազգային հանրության կողմից արձագանքելուն՝ համագործակցելով ինչպես ՀՀ ՄԻՊ-ի, այնպես էլ միջազգային կառույցների հետ, որի արդյունքում հրապարակվել ու միջազգային տարբեր կառույցների են ներկայացվել տասնյակ զեկույցներ»,-խոսելով ԱՀ ՄԻՊ-ի մասին՝ նշել է Արա Սարգսյանը:

«Մենք՝ որպես հասարակություն, պետք է բարձրաձայնենք պետությունում առկա խնդիրները և առաջարկենք համապարփակ ու ընդունելի լուծումներ: Դրա համար մեզ պետք է բարձր իրավագիտակցություն: Իսկ քննիչ հանձնաժողովները պետք է ծառայեն ոչ թե իշխանությանը, այլ՝ պետությանն ու ժողովրդին: Նրանք պետք է լուրջ մոտենան այս գործընթացին, որ հանրությունը իմանա միայն ճշմարիտը, ու երկիրն էլ ընթանա օրինական և արդար զարգացման ճանապարհով»,-նշել է Սնեժանա Թամրազյանը:

Գիտական զեկուցումներն ուղեկցվել են հարցերով ու քննարկումներով:

➥ 5 «Հպարտ եմ, որ ծառայում եմ հայրենիքիս: Եթե անհրաժեշտություն լինի, պատրաստ եմ կրկին մասնակցել և իմ ներդրումն ունենալ հայրենիքի պաշտպանությանը»,-նշել է 44-օրյա թեժ մարտերի մասնակից զինծառայող Նարեկ Սամվելյանը:

Վաղինակ Աբրահամյանը, մասնակցելով թեժ մարտերի, Շուշիում երեք օր շրջափակման մեջ է գտնվել. ճեղքելով շրջափակումը՝ դուրս է եկել՝ իր հետ դուրս բերելով ու փրկելով վիրավոր ընկերոջը:

«Այդ օրերին հրաշք էր ողջ մնալը: Չէինք պատկերացնում, որ ողջ կմնանք...Միշտ էլ պատրաստ եմ ծառայել հայրենիքիս»,-ասում է նա:

Ուսանողների անունից հայրենյաց պաշտպանների տոնը շնորհավորել է ԱրՊՀ ուսանող Յուրա Մարգարյանը, ով պատերազմի ժամանակ զինծառայող էր և մասնակցում էր պատերազմին:

«Ես հիմա էլ շարունակում եմ հայրենիքս պաշտպանել՝ զինվելով գիտելիքներով, որը կծառայեցնեմ ի շահ մեր ազգի բարգավաճման»,-նշել է Յուրա

Մարգարյանը՝ տեղեկացնելով, որ ուսխորհրդում բացվել է մարտական ակումբ, որին կարող են անդամակցել ոչ միայն տղաներ, այլև՝ աղջիկներ:

Մանկավարժության և սպորտի ֆակուլտետի դեկան Շահեն Այդինյանը, ամփոփելով հանդիպումը, շնորհակալություն է հայտնել միջոցառման մասնակիցներին, նշելով. «Այս տոնը բոլորինս է, որովհետև մեզնից յուրաքանչյուրը պետք է իր կարողությունների չափով լինի հայրենիքի պաշտպան: Լինենք արժանի հայրենյաց պաշտպանի վեհ կոչմանը»:

ԳԻՐՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՕՐ

Փետրվարի 21-ին ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը հանդիպել է ուսանողական ինքնավար կառույցների ակտիվի հետ: Հանդիպմանը մասնակցում էին նաև ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը և ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի ներկայացուցիչներ:

Կարևորելով օրվա խորհուրդը և գիրք նվիրելու ավանդույթը՝ ռեկտոր Ա. Սարգսյանը հանդես է եկել լեզվին նվիրված դասախոսությամբ՝ անդրադառնալով մայրենի լեզվի պատմական ու քաղաքական դերին, լեզվի զարգացման պատմությանը, առկա խնդիրների և դրանց լուծման ուղիներին: Ռեկտորը նաև արժեքավոր գրքեր է նվիրել ուսանողական ինքնավար կառույցների ակտիվ ուսանողներին:

«Հայոց գրերն ու մայրենի լեզուն այն գերակա արժեքներն են, որոնց շնորհիվ դարերի ընթացքում պատմական ամենաբարդ ժամանակաշրջաններում հայ ժողովուրդը կարողացել է պահպանել իր ազգային ինքնությունը»,-ընդգծել է ռեկտորը:

Հանդիպման ընթացքում ուսանողները հանդես են եկել ելույթներով, ասմունքով:

* * *

Մայրենի լեզվի միջազգային օրվա առթիվ ԱրՊՀ Ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դասախոս Արմինե Արզումանյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված Մայրենիի տոնին:

Միջոցառման ընթացքում ուսանողները ներկայացրել են լեզվի տոնի խորհուրդը, մայրենի լեզվի ժամանակակից հիմնախնդիրները, փորձել են ցույց տալ լուծման ուղիները՝ հայերենի առջև ծառացած մարտահրավերները հաղթահարելու համար: Ուսանողները հանդես են եկել նաև ասմունքով՝ լեզվին նվիրված հայ գրականության գոհարներից: Մասնակիցներին և ներկաներին Գրքի տոնի ու Մայրենի լեզվի օրվա կապակցությամբ նվիրել են գրքեր:

ԱրՊՀ ՌԵԿՏՈՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է 2020-2021 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Փետրվարի 15-ին գումարվել է ԱրՊՀ խորհրդի նիստ, որի ընթացքում ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը ներկայացրել է 2020-2021 ուստարվա կատարած աշխատանքների մասին հաշվետվություն:

Նիստի օրակարգի առաջին հարցով ԱրՊՀ խորհրդի նախագահ է ընտրվել ԱՀ պետնախարար Արտակ Բեգլարյանը: Խորհրդի նորընտիր նախագահ Ա. Բեգլարյանը, շնորհակալություն հայտնելով նախորդ նախագահին ու խորհրդի անդամներին կատարած աշխատանքի համար, պատրաստակամություն է հայտնել իր գործունեությամբ նպաստել բուհի կրթության արդյունավետության բարձրացմանը, որակի շարունակական բարելավմանը, համագործակցային շրջանակների ընդլայնմանը:

Օրակարգի հաջորդ հարցով ԱրՊՀ ռեկտորը, ըստ բնագավառների, ներկայացրել է անցած ուստարում կատարած աշխատանքները կրթական, գիտական, միջազգային համագործակցության, ուսանողների հետ տարվող աշխատանքների, ֆինանսատնտեսական ուղղություններով:

Ռեկտորի խոսքով՝ 2020 թվականի մարտահրավերները մեծապես վնասել են նաև կրթական համակարգը: Դժվարությունները նախ համավարակով, ապա՝ 44-օրյա պատերազմով էին պայմանավորված: Հեռավար կրթության կազմակերպման ուղղությամբ որպես արձանագրված հաջողություն ռեկտորն առանձնացրել է Google For Education էլեկտրոնային հարթակի ներդրումը, որը հնարավոր դարձրեց ճգնաժամի պայմաններում արդյունավետ կազմակերպել ուսումնական գործընթացը: 44-օրյա պատերազմից անմիջապես հետո՝ 2020 թ. դեկտեմբերի 1-ին, բուհում անցումը ավանդական ուսուցման նպաստեց արագ ինքնակազմակերպման և բնականոն կյանքի վերականգնման:

«Հաշվետու տարում Արցախի պետական համալսարանը հաջողությամբ անցել է որակի արտաքին հավաստման գործընթացը և արժանացել ինստիտուցիոնալ հավատարմագրման՝ 4 տարի ժամկետով: ԱրՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը կազմակերպել է ՀՀ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը 2021թ. մարտի 9-ից մարտի 13-ն ընկած ժամանակահատվածում»,-որպես գլխավոր ձեռքբերում նշել է ռեկտորը:

Կրթական գործունեության ուղղությամբ, ռեկտորի խոսքով, հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են մասնագիտական կրթական ծրագրերի վերլուծություն և արդիականացում, հաստատվել են նաև նորերը: Այդ ընթացքում Արցախի մայր բուհը մասնագետներ է պատրաստել բակալավրիատի 19 ու մագիստրատուրայի 20 կրթական ծրագրերով՝ 5 ֆակուլտետի և 16 ամբիոնի միջոցով, 2020-2021 ուսումնական տարում բակալավրիատի ուսանողների թիվը կազմել է 1960, մագիստրատուրայի ուսանողների թիվը՝ 315, ասպիրանտների թիվը՝ 19:

Գիտական գործունեության բնագավառում ևս կատարվել են աշխատանքներ: ԱրՊՀ-ում ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում խթանելու համար ներդրվել է «Հետազոտության պլանավորում» առարկան. բոլոր առարկաների շրջանակներում ուսանողները ինքնուրույն աշխատանքներ են իրականացնում: ➥ 4

3 ➥ Տարվա ընթացքում ԱրՊՀ-ում դասախոսների և ուսանողների մասնակցությամբ կազմակերպվել են առցանց գիտաժողովներ, տարաբնույթ գիտական քննարկումներ և ընթերցումներ:

Տարվա ընթացքում ԱրՊՀ-ում դասախոսների և ուսանողների մասնակցությամբ կազմակերպվել են առցանց գիտաժողովներ, տարաբնույթ գիտական քննարկումներ և ընթերցումներ:

«Ուսումնական տարվա ընթացքում հրատարակվել է «ԱրՊՀ գիտական տեղեկագիր» հանդեսը՝ հասարակական և բնական ուղղություններով: Համալսարանի դասախոսները հրատարակել են 113 գիտական աշխատանք, որից 8 մենագրություն, 2 ուսումնական ձեռնարկ, 1 ուսումնամեթոդական ձեռնարկ, 102 հոդված»,-ընդգծել է ռեկտորը՝ առանձնակի կարևորելով նաև ԱրՊՀ գիտխորհրդի որոշմամբ հիմնադրված «Արցախի ժողովրդագիտությունը» մատենաշարը, որի 4 հատորները հրատարակվել են հաշվետու ժամանակաընթացքում:

Միջբուհական համագործակցության ուղղությամբ կատարված աշխատանքներից խոսելով՝ ռեկտորը նշել է, որ առ այսօր ԱրՊՀ-ն համագործակցության պայմանագրեր ունի արտերկրի, ՀՀ և ԱՀ շուրջ 50 բուհերի, գիտական և այլ կառույցների հետ:

«ԱրՊՀ գործունեության առանցքային դրույթը շարունակում է մնալ ուսանողների հանդեպ պատասխանատվությունը: Պատերազմի ժամանակ ԱրՊՀ քսանվեց ուսանողներ նահատակվել են՝ իրենց կյանքի գնով ապահովելով մեր ապրելու հնարավորությունը: Հետպատերազմական շրջանում մայր բուհի ղեկավարությունը զգալի ջանքեր է գործադրել համալսարանական գործունեությունը բնականոն հունի մեջ վերադարձնելու ուղղությամբ»,-նշել է ռեկտորը՝ ներկայացնելով ուսանողների հետ տարվող ախատանքների ուղղությամբ կատարված տարաբնույթ միջոցառումները:

Բուհի ղեկավարության ուշադրության կենտրոնում եղել ու մնում են համալսարանականների սոցիալական վիճակի բարելավման հարցերը:

Միջոցառումներ են ձեռնարկվել առավել կարիքավոր ուսանողներին և աշխատակիցներին նյութական աջակցություն ցույց տալու ուղղությամբ, վերանորոգման լուրջ աշխատանքներ են տարվել ուսանողական հանրակացարանում:

Ռեկտոր Արմեն Սարգսյանը համալսարանի գործունեության նկատմամբ հոգատարության և բարձրացված խնդիրների լուծման, գլխավոր մասնաշենքի հիմնանորոգման համար շնորհակալություն է հայտնել ԱՀ գործադիր և օրենսդիր իշխանության մարմիններին:

Ռեկտորի հաշվետվությունը գնահատվել է բավարար:

Օրակարգի հաջորդ հարցով ԱրՊՀ հաշվապահական հաշվառման բաժնի պետ Նարինե Գրիգորյանը ներկայացրել է հաշվետվություն 2021թ. ֆինանսական տարվա արդյունքների մասին, հաստատվել է 2022 թ. ծախսերի նախահաշիվը:

Այլ հարցերում նիստը քննարկել է բարձրագույն կրթության զարգացմանը, բնագավառում առկա խնդիրներին և դրանց լուծման ուղիներին վերաբերող հարցեր:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅՐԵՆՅԱՑ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Փետրվարի 23-ին ԱրՊՀ-ն նախաձեռնել է հանդիպում պատերազմի բովով անցած մի խումբ սպաների ու զինվորների հետ, որին մասնակցում էին բուհի ուսանողները: Հանդիպումը յուրահատուկ հայրենասիրության դաս էր, որի բանախոսները պատերազմի դաժանություններն անձամբ զգացած ու հերոսությունների իրենց բաժինը կերտած մարդիկ էին, ովքեր պատերազմի մասին պատմում էին իրենց տեսածով, զգացածով ու հայրենիքի համար կատարած իրենց ծառայությամբ: Տղաներ, ովքեր քչախոս են իրենց կատարածի մասին, բայց մեծություն՝ իրենց սխրանքներով:

Միջոցառումը մեկնարկել է հարգանքի տուրքով՝ ի հիշատակ պատերազմներում անմահացած հերոս նահատակների: ԱրՊՀ-ից հանուն հայրենիքի պաշտպանության Արցախյան առաջին պատերազմում անմահացել է 72 ուսանող, ևս երեքը՝ ապրիլյանի և դրան նախորդած սրացումների ժամանակ, իսկ 44-օրյա պատերազմում հավերժի ճամփորդ դարձավ 26 ուսանող:

Ողջունելով ներկաներին՝ ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը խոսել է հայրենյաց պաշտպանի օրվա խորհրդի մասին և նշել, որ նման օրերը պետք է դարձնել առիթ՝ արժևորելու հայրենիքի պաշտպանի դերը և սերունդներին դաստիարակելու հայրենատեր լինելու կամքով:

Հրավիրվածներից պահեստազորի մայոր Նվեր Լազարյանը Արցախյան երեք պատերազմների մասնակից է: Պատմում է, որ երբ սկսվեց առաջին պատերազմը, 18 տարեկան էր դեռ, այդ ժամանակ չկար կանոնադրություն, օրենսդրական պարտավորվածություն, այլ կար կամք և հոգու պարտք՝ զինվորագրվել հայրենիքի պաշտպանության սուրբ գործին: Կամավորագրվեց և ունեցավ իր բաժին հաղթանակը, այդպես կամավորագրվեց նաև Ապրիլյան ու 44-օրյա պատերազմների ժամանակ: Հայրենիքի համար կատարած ծառայության համար նա արժանացել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի: Այժմ շարունակում է իր ծառայությունը հայրենիքին Ստեփանակերտի համար 12 հիմնական դպրոցում՝ որպես զինղեկ՝ սաներին հայրենասիրություն ուսուցանելով:

«Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանակիր, փոխգնդապետ Պարգև Մարտիրոսյանն իր խոսքում նշել է, որ 44-օրյա պատերազմի բոլոր մասնակիցները հերոսներ են, նրանք բոլորն էլ կռվել են «Ոչ մի քայլ հետ» սկզբունքով: ՊԲ-ն այսօր էլ կատարում է իր առջև դրված խնդիրները, պատերազմից հետո կատարել են հետևություններ, աշխատում են խնդիրների լուծման ուղղությամբ:

Միջոցառմանը հրավիրված զինվորները երկու ամսվա զինծառայողներ էին, երբ սկսվեց 44-օրյա պատերազմը: Մարտեր են մղել պատերազմի ամենաթեժ կետերում, աչքի ընկել սխրանքներով, արիության ու մարտական ծառայության համար արժանացել պետական պարգևների:

Վահե Խաչատրյանը պատմում է, որ հայրենիքի պաշտպանության սրբազան պարտքի գիտակցումով են մասնակցել պատերազմին, կատարել իրենց առջև դրված խնդիրները:

«Ոչ մի զինվոր չի պարտվել, բոլորն էլ հերոսներ են: Եթե միասնական լինենք, ավելի ուժեղ կլինենք, ու ոչ մի թշնամի չի կարող մեզ հաղթել»,-նշել է նա:

➥ 6